

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


18 մարտի 2024 թվականի N 703

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ 1/1
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անի Գուրգենի Նազարյանի 08/02/2023 թվականի թիվ 02/2680 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08092016-06-0007 վկայականը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ**.

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք Նալբանդյան փողոց 1/1 հասցեում 0.04861 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 18
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N 704

ԻՐԻՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎՈԼՈՂՅԱՅԻ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկաման և տրանսպորտի բաժնի կողմից կազմված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով 23 փետրվարի 2024 թվականին հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Ըստ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկաման և տրանսպորտի բաժնի կողմից 23.02.2024թ. կազմված թիվ 3 արձանագրության և զեկուցագրի՝ Իրինա Մաթևոսյան Վոլոդյայի անհատ ձեռնարկատերը (ՀՎՀՀ՝66929692, հաշվառման հասցե՝ Վանաձոր համայնք, Վարդանանց փողոց թիվ 98/24, ձեռնարկատիրությամբ զբաղվելու հասցեն՝ Վանաձոր համայնք, Վարդանանց փողոց 98/գ) Վանաձոր համայնքի Վարդանանց փողոցի 98/գ հասցեում առանց համապատասխան թույլտվություն ստանալու զբաղվում է թանկարժեք մետաղներից խտորաստված իրերի մանրածախ առք ու վաճառքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի » ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի բ կետի հիմքով 23 փետրվարի 2024 թվականին հարուցվել է վարչական վարույթ, որի հիման վրա 14 մարտի 2024 թվականին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին պատշաճ ծանուցվել և ներկայացել է Իրինա Վոլոդյայի Մաթևոսյանը (ծնված՝1957թ., բնակվող՝ Վանաձոր համայնք, Վարդանանց փողոց, 98 շենք, 24 բնակարան) :Վարույթի լսումների ընթացքում Իրինա Մաթևոսյան Վոլոդյայի անհատ ձեռնարկատերը հայտնեց, որ ինքը չի

իմացել տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին Վանաձոր համայնքի ավագանու 29.11.2023թ. թիվ 37-ն որոշման մասին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով: Սույն մասով նախատեսված խախտումը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219.1-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169.16 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 162-րդ, 219-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման

մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 14-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Իրինա Մաթևոսյան Վոլոդյայի անհատ ձեռնարկատիրոջը ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Իրինա Մաթևոսյան Վոլոդյայի անհատ ձեռնարկատիրոջը՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N705

ՍԱՄՎԵԼ ՎՈԼՈՂՅԱՅԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի Ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի արձանագրության և զեկուցագրի հիման վրա 2024 թվականի փետրվարի 16 - ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնից ստացված 16.02.2024թ. արձանագրության և զեկուցագրի համաձայն Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտա, 40 շենքի 17 բնակարանին կից ինքնակամ կառուցված է մառան (սեփականատեր Սամվել Վոլոդյայի Օհանյան) ապօրինի տնօրինել է: Սույն զեկուցագրով առաջարկվել է վարչական վարույթին մասնակից դարձնել նաև մյուս կողմին՝ սեփականատեր՝ Լյովա Արամայիսի Սարգսյանին:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ սույն թվականի փետրվարի 29-ին, ժամը 10:30-ին, որին մասնակցելու նպատակով ծանուցվել են Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտա, 40/17 հասցեի բնակիչ՝ Սամվել Վոլոդյայի Օհանյանը և Վանաձոր համայնքի Հալաբյան նրբանցք 17 հասցեի բնակիչ՝ Լյովա Արամայիսի Սարգսյանը, սակայն վարչական վարույթի լուսմներին ներկայացել է միայն Լյովա Սարգսյանը, իսկ Սամվել Օհանյանի ծանուցման վերաբերյալ հետադարձի անդորրագիրը ստացվել է վարույթի լուսմներից հետո 04.03.2024 թվականին: Այնուհետև կրկին վարչական վարույթի լուսմներ են նշանակվել 2024 թվականի մարտի 14-ին, ժամը 10:30-ին, որին մասնակցելու նպատակով կրկին ծանուցվել են Սամվել Օհանյանը և Լյովա Սարգսյանը: Վերջիններս

վարույթի լսումներին չեն ներկայացել, ծանուցման վերաբերյալ ստացման հետադարձի անդորրագրերը մինչ օրս չեն ստացվել:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սամվել Վուրդյայի Օհանյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N 706


ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի տարածքում գտնվող չորացած, գերհասուն, սանիտարական նորմերին չհամապատասխանող, հատման ենթակա ծառերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 12.03.2024 թվականին կազմված արձանագրությունները, «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ Հայկ Համբարձումյանի 13.03.2024 թվականի թիվ 03Ա/28, 03Ա/29, 03Ա/30, 03Ա/31, 03Ա/32, 03Ա/33, 03Ա/34 և 03Ա/35 զեկուցագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 51-րդ հոդվածով, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Տալ թույլտվություն Վանաձոր համայնքի, «Սայաթ Նովայի» անվան այգու գլխավոր մուտքին հարակից մայթեզրին առկա 1/մեկ/վտանգ ներկայացնող ծառի, Երևանյան խճ. 76 հասցեում առկա 1 /մեկ/ չորացած ծառի, «Սայաթ Նովայի» անվան այգում առկա 1 /մեկ/ չորացած եղևնու, Մյասնիկյան 43 հասցեում առկա 2 /երկու/ չորացած ծառերի, Աղայան 83 հասցեում առկա 1 /մեկ/ չորացած ծառի, թիվ 31 մանկապարտեզի տարածքում առկա փշոտ ծառերի, Վարդանանց փողոցի 12/13-13 հասցեում առկա 1 /մեկ/չորացած ծառի, 3-րդ մասի գերեզմանատանը՝ Բանյոյի 1/8 հասցեի բնակիչ Բ. Կասպարյանի ազգականի գերեզմանոցում առկա 1 /մեկ/ծառի հատման համար:


2. «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ին իրականացնել վերոնշյալ ծառերի հատման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 19
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N 707

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՇԵՆՔԻ ԹԻՎ 18
ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍՎԵՐԺԻԿ ԽՈՐԵՆԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Ը. 28ԲՆ.)
ԱՎԵՏԻՔՅԱՆԻՆ, ՎԱՇԵ ՍՎԵՐԺԻԿԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ, ՄԵՐԻ ՀՐԱՆՏԻ
ԷԼԻԲԵԿՅԱՆԻՆ, ԿԱՐԻՆԵ ՎԱՇԵԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԼԻԱՆԱ ՎԱՇԵԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Մկրտչի Ավետիքյանի (1953թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ որոշում եմ.

1. Հանձնարարել Քաջիկ Թաղևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՒԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Ը. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 9 շենքի թիվ 18 չորս սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2. Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 9 շենքի թիվ 18 չորս սենյականոց բնակարանը 35 500 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալներ՝ Սվերժիկ Խորենի Քոչարյանին, Սուսաննա Մկրտչի Ավետիքյանին, Վաշե Սվերժիկի Քոչարյանին, Մերի Հրանտի Էլիբեկյանին, Կարինե Վաշեի Քոչարյանին և Լիանա Վաշեի Քոչարյանին:

3. Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 9 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 18 բնակարանի վարձակալներ՝ Սվերժիկ Խորենի Քոչարյանին, Սուսաննա Մկրտչի Ավետիքյանին, Վաշե Սվերժիկի Քոչարյանին, Մերի Հրանտի Էլիբեկյանին, Կարինե Վաշեի Քոչարյանին և Լիանա Վաշեի Քոչարյանին:

4. Քաջիկ Թաղևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՒԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Ը. 28ԲՆ.) Սվերժիկ Խորենի Քոչարյանի, Սուսաննա Մկրտչի Ավետիքյանի, Վաշե Սվերժիկի Քոչարյանի, Մերի Հրանտի Էլիբեկյանի, Կարինե Վաշեի Քոչարյանի և Լիանա Վաշեի Քոչարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրանց ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N 708

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐՔ. ԹԻՎ 11 ՇԵՆՔԻ ԹԻՎ 6
ՔԱՂԱՎԱՐԱՆԸ ՎԻՏԱԼԻ ՌՈՒԲԵՆԻ ԽԱԼԱՓՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ՇԻՐԱԿԻ
ԽԱԼԱՓՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐԻԿ ԶԱՆԻՔԵԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ԼԻԼԻ ԷՂԳԱՐԻ
ԽԱԼԱՊՅԱՆԻՆ, ՄԱՐԻ ԷՂԳԱՐԻ ԽԱԼԱՊՅԱՆԻՆ ԵՎ ԼՅՈՒՍԻ ԷՂԳԱՐԻ
ԽԱԼԱՊՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիտալի Ռուբենի Խալափյանի (1963թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ որոշում եմ.

1. Հանձնարարել Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻԶԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոցի 1-ին նրբ. թիվ 11 շենքի թիվ 6 երկու սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2. Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոցի 1-ին նրբ. թիվ 11 շենքի թիվ 6 երկու սենյականոց բնակարանը 25 500 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալներ՝ Վիտալի Ռուբենի Խալափյանին, Գայանե Շիրակի Խալափյանին, Գոհարիկ Զանիբեկի Հարությունյանին, Լիլի Էղգարի Խալափյանին, Մարի Էղգարի Խալափյանին և Լյուսի Էղգարի Խալափյանին:

3. Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոցի 1-ին նրբ. թիվ 11 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 6 բնակարանի վարձակալներ՝ Վիտալի Ռուբենի Խալափյանին, Գայանե Շիրակի Խալափյանին, Գոհարիկ Զանիբեկի Հարությունյանին, Լիլի Էղգարի Խալափյանին, Մարի Էղգարի Խալափյանին և Լյուսի Էղգարի Խալափյանին:

4. Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻԶԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) Վիտալի Ռուբենի Խալափյանի, Գայանե Շիրակի Խալափյանի, Գոհարիկ Զանիբեկի Հարությունյանի, Լիլի Էղգարի Խալափյանի, Մարի Էղգարի Խալափյանի և Լյուսի Էղգարի Խալափյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրանց ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N 709

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1918 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմքը ընդունելով 19 դեկտեմբերի 2024 թվականի թիվ 1918 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 19 դեկտեմբերի 2024 թվականի «Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 8ա հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Սոս Ղևոնդի Գալստյանի, Աննա Սուրենի Գոգյանի և Սարգիս Գազիկի Գալստյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1918 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում, 1-ին և 2-րդ կետերում՝ «Աննա Սուրենի Գալստյանի» բառերը փոխել « Աննա Սուրենի Գոգյանի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N 710


ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՐՅԱՆ 4/1-1/1 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Զորյան 4/1-1/1 հասցեին կից գտնվող 0.01055 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Զորյան փողոց, 4/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 19
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N 711

«ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ-ի կոմերցիոն տնօրեն Արինա Առուստամյանի 2024 թվականի մարտի 13-ի թիվ 01/5072 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

1. Բավարարել Երևան քաղաքի Դավիթ Անհաղթի փող. թիվ 8/4 հասցեում գործող «ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ-ի կոմերցիոն տնօրեն Արինա Առուստամյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 61 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:

2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 19
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N 712

«ՄԻՎԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՄԻՎԱ» ՍՊԸ-ի տնօրեն Միքայել Աբրահամյանի 2024 թվականի մարտի 13-ի թիվ 01/5078 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**

1. Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աղայան փող. թիվ Ե1/35 հասցեում գործող «ՄԻՎԱ» ՍՊԸ-ի տնօրեն Միքայել Աբրահամյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 47/8 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:

2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N 713

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՂԱՐԻԲԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՂԱՐԻԲԻ» 2024 թվականի
մարտի 13-ի թիվ 01/5066 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ
օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և
«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

1. Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պող. թիվ 13/10
հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՂԱՐԻԲԻ» հայտը՝
ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական
տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 13/10 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու
թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:

2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և
գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան
թույլտվություն:

3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և
գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան
պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


19 մարտի 2024 թվականի N 714

«ՖԱՍՏՖՈՒԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱՁԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՖԱՍՏՖՈՒԴ» ՓԲԸ-ի տնօրեն Լեոնիդ Մաթևոսյանի 2024 թվականի մարտի 13-ի թիվ 01/5068 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**

- Բավարարել Երևան քաղաքի Տիգրան Մեծի պող. թիվ 15/16 հասցեում գործող «ՖԱՍՏՖՈՒԴ» ՓԲԸ-ի տնօրեն Լեոնիդ Մաթևոսյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի 73/1-2 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
- Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
- Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


19 մարտի 2024 թվականի N 715

«ՋիՋի» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՋիՋի» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Քնարիկ Գրիգորյանի 2024 թվականի մարտի 14-ի թիվ 01/5099 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

- Բավարարել Երևան քաղաքի Մանթաշյան փող. թիվ 6 հասցեում գործող «ՋիՋի» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Քնարիկ Գրիգորյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 39 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
- Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
- Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2024 թվականի N 716

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի «ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1772 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 1772 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 20
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մարտի 2024 թվականի N 717

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 10-12/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆԿՈՂ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ
ԱՎՏՈԿԱՆԳԱՌ-ՏԱՂԱՎԱՐ ՈՒ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ
ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԼՅՈՒԴՎԻԳ
ՀՐԱՆՏԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿՎԱՐԻ 19 ՄԱՅԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 768 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյուդվիգ Հրանտի Թովմասյանի 15.08.2023 թվականի թիվ 02/13870 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24052018-06-0015 և 09062023-06-0039 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 2013թ. հուլիսի 15-ի թիվ 736-Ա որոշումը, 15 մայիսի 2018թ. թիվ 1596 համաձայնագիրը, 29 նոյեմբերի 2023 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 48 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 10-12/1 հասցեում գտնվող ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 9,02քմ մակերեսով ծածկի և դրանցով զբաղեցված 23,0քմ մակերեսով հողամասը նախապատվությամբ վարձակալության իրավունքով, 5 տարի ժամկետով, տրամադրել Լյուդվիգ Հրանտի Թովմասյանին :

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Լյուդվիգ Հրանտի Թովմասյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ,7.0քմ մակերեսով տաղավարի, 9,02քմ մակերեսով ծածկի և դրանցով զբաղեցված 23,0քմ մակերեսով հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր: Վարձավճարների չափը սահմանելով՝ տաղավարի յուրաքանչյուր 1.0քմ-ի համար վճարի չափը սահմանելով ամսական 800 (ութե հարյուր) դրամ, ծածկի յուրաքանչյուր 1.0քմ-ի համար վճարի չափը սահմանելով ամսական 60 (վաթսուն) դրամ, ընդհանուր՝ 6150 (վեց հազար հարյուր հիսուն) դրամ և հողամասի վճար սահմանելով ամսական 5730 (հինգ հազար յոթ հարյուր երեսուն) դրամ, որից 7,0քմ մակերեսով տաղավարի


զբաղեցրած հողամասի վճարի չափը 1.0քմ-ի համար սահմանվում է ամսական 800 (ութ հարյուր) դրամ, իսկ մնացած 16,0քմ (23,0-7,0) մակերեսով շինությունների զբաղեցրած հողամասի վճարի չափը 1.0քմ-ի համար սահմանվում է ամսական 60 (վաթսուն) դրամ վարձավճարով: Աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

